ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ՊԱՏՄԱԲԱՆԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ, ՔԱՂԱՔԱՑԻՆ
(ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ Գ. Գալոյանի ծննդյան 60-ամյակի առթիվ)

Գալուստ Գալոյանը սովետահայ պատմագրության լավագույն ներկայացուցիչներից է, պատմաբան, որի աշխատությունները նրան ճանաչում են բերել թե մեր հանրապետության և թե Միության գիտական հասարակայնության լայն շրջաններում: Գ. Գալոյանը գիտության անդաստանը մտավ 1950-ական թվականների կեսերին և պատմագիտական իր աշխատանքներով ու դրանց գիտամեթոդական նպատակամղվածությամբ մայլ առ մայլ իր արժանի ներդրումը բերեց հայագիտության այդ բնագավառին՝ մի շարք կարևորագույն պրոբլեմների բարձրացման և նորովի մշակման ինքնատիպ մոտեցմամբ դառնալով վերջին շրջանի հայ պատմագիտական մտքի առաջատար և կողմնորոշող դեմքերից մեկը:

Գ. Գալոյանը ծնվել է 1927 թ. Արթիկի շրջանի Փոքր Պարնի գյուղում, որն այժմ արժանավայել կրում է նրա հոր՝ հայրենասեր Անուշավանի անունը: 1946 թ. զեռազանց առաջադիմությամբ ավարտելով Փանիկի միջնակարգ դպրոցը, Գ. Գալոյանը այնուհետև դառնում է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների նորաբաց ֆակուլտետի սաներից մեկը: Հեշտ չէր աչքի ընկնող տեղ գրավել այդ ֆակուլտետի առաջատար ուսանողության շարքերում. Գ. Գալոյանը բռնում է այդ ճենությունը: Դեռ ավելին. ուսման զեռազանցությանը նա զուգակցում է կոմերիտական գործչի աշխատանքը: 1953—1955 թվականներին նա ուսանում է ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր հասարակական գիտությունների ակադեմիայում և բեկնածուական դիսերտացիան պաշտպանելուց հետո, 1955 թվականից աշխատում ՍՄԿԿ ԿԿ-ին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղում՝ նախ որպես ավագ գիտաշխատող, իսկ 1958—1963 թթ.՝ գիտական գծով ինստիտուտի դիրեկտորի տեղակալ և կուսակցության պատմության բաժնի վարիչ: 1963 թ. նա պաշտպանում է դոկտորական դիսերտացիա և ստանում պատմական գիտությունների դոկտորի կոչում: 1971 թ. Գ. Գալոյանը ընտրվում է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1982 թ.՝ իսկական անդամ:

1963—1979 թթ., շուրջ 16 տարի, նա գլխավորում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտը և որպես նրա դիրեկտոր լուրջ աշխատանք է տանում մեր հանրապետությունում պատմագիտական մտքի զարգացման և գիտական կադրերի պատրաստման գործում: Պատմության ինստիտուտում է, որ ըստ ամենայնի դրսևորվում են նրա գիտական և կազմակերպչական եզակի ընդունակությունները:

Ակադեմիկոս Գ. Գալոյանը բազմաթիվ մենագրությունների հեղինակ է, մենագրություններ, որոնց մի մասը լույս է տեսել Երևանում, իսկ մի քանիսը Մոսկվայում. վերջին հանգամանքը ինքնին վկայում է դրանց կարևորությունը նաև միութենական ընթերցողի համար: Տարաբնույթ է այդ մենագրությունների ներառած պրոբլեմների շրջանակը: Բայց եթե ի մի բերելու լինենք դրանք, ապա դժվար չէ փաստարկել, որ հեղինակի գիտական նախասիրությունները դառնում են հետևյալ հարցերի շուրջը. Հայաստանում (նաև Անդրկովկասում) սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարի պատմություն, Անդրկովկասում. սովետական իշխանության և սոցիալիստական շինարարության պատմության բուրժուական կեղծարարության մերկացում, ազգային և բանվորական շարժման հարցեր, Հոկտեմբերյան հեղափոխությունը և անդրկովկաս-

յան ժողովուրդների վերածնունդը, ռուս-անդրկովկասյան ժողովուրդների պատմական կապերի և բարեկամության լուսաբանում և այլն:

Գ. Գալոյանի անդրանիկ աշխատություններից մեկը «Հայաստանում սովետական իշխանության համար մղված պայքարը» վերտառությամբ մենագրությունն էր (Մոսկվա, 1957): Այս գիրքը հետպատերազմյան տարիներին լույս տեսած առաջին աշխատություններից մեկն էր, որտեղ միանգամայն նորովի մոտեցմամբ, փաստական նոր հիմքով և մանավանդ կուսակցության XX համագումարից սկիզբ առած մտավոր տեղաշարժի հայեցակետից մեկնաբանվում էին պրոբլեմի ընդգրկած բոլոր (կամ գրեթե բոլոր) հիմնական խնդիրները: Մենագրության մեջ պատմատեսական և ժամանակագրական կտրվածքով, Անդրկովկասի քաղաքական տեղաշարժերի լայն ֆոնի վրա, քննարկված և լուսաբանված են այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում (այդ թվում նաև Հայաստանում) առաջացած սոցիալ-քաղաքական կացությունը. 1917—1920 թվականներին հայ աշխատավորների մղած հեղափոխական շարժումները, Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի օբյեկտիվ պայմանները, հակահեղափոխական ուժերի կազմակերպած խռովությունների ձախողումը և այլն:

Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի պրոբլեմի տարբեր կողմերը առանձին ուսումնասիրության առարկա դարձան հեղինակի հետագա աշխատություններում: Այս առումով գիտական արժեքավոր հետքերում էին «Մայիսյան հերոսական ապստամբությունը» (1960) և «Հոկտեմբերյան հեղափոխությունը և Անդրկովկասի ժողովուրդների վերածնունդը» (Մոսկվա, 1977) աշխատությունները: Առաջին աշխատության մեջ հեղինակը համակողմանի քննարկում է Մայիսյան ապստամբության օբյեկտիվ պահանջները, կոմունիստական կազմակերպությունների դերը ապստամբության կազմակերպման ու ղեկավարման գործում և ապստամբության պարտության պատճառները, ցույց է տալիս շարժման պատմական նշանակությունը: Հարցերի անհամեմատ ավելի լայն կտավի վրա է գրված երկրորդ մենագրությունը: Հեղինակը ցույց է տվել այն տեղաշարժերը, որոնք մեր բազմազգ երկրի ժողովուրդների փոխհարաբերություններում առաջ բերեց մեծ Հոկտեմբերը և խթանեց նրանց հեղափոխական զարթոնքը՝ ի վերջո հասցնելով այդ ժողովուրդների ազգային-սոցիալական ազատագրությունը շահագործողների դարավոր լծից: Գրքի առանցքը (բերես ամենամեծ արժանիքը) այն է, որ Անդրկովկասում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի և երկրամասի աշխատավորության ազգային ու սոցիալական համակողմանի վերընթացի հարցերը բարձրացված և քննարկված են ամբողջ երկրի հասարակական-քաղաքական արմատական վերափոխումների միասնական շղթայի մեջ՝ որպես ընդհանուր իրականության բաղկացուցիչ մասեր, և միաժամանակ առաջին պլան է մղված կոմունիստական կուսակցության քաղաքականության հիրավի փրկարար դերը:

Գ. Գալոյանին է պատկանում Անդրկովկասում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի պատմության բուրժուական խեղաթյուրումների մերկացման առաջնության դափնին: «Սոցիալիստական հեղափոխությունը Անդրկովկասում բուրժուական պատմագրության լուսաբանության մեջ» (Մոսկվա, 1960) աշխատությունը հեղինակի առաջին լուրջ քայլն էր այդ ուղղությամբ: Հաջորդ քայլը «Անդրկովկասում սոցիալիստական հեղափոխության և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ» աշխատությունն էր (1961), որտեղ ավելի է ընդլայնված պրոբլեմին աղերսվող հարցերի շրջանակը: Անառարկելի փաստերի և անգլիալեզու գրականության օգտագործումը հեղինակին հնարավորություն է տվել մերկացնելու բուրժուական պատմաբանների միտումները՝ ժխտելու երկրամասում սովետական իշխանության հաղթանակի օբյեկտիվ պահանջները և ծուռ հայելու մեջ դիտելու սոցիալիզմի նվաճումները: Հոկտեմբերյան հեղափոխության, Անդրկովկասի 1917—1920 թվականների և սովետական շրջանի պատմության բազմաբնույթ հարցերին ու խնդիրներին քաջ իրազեկությունը, մարքս-լենինյան տեսությամբ հիմնավոր պատասխանությունը դյուրացրել են հեղինակի առաջ ծառացած բարդ ու կենսական հարցերի հստակ լուսաբանումը և ժամանակակից բուրժուական պատմագիտության սնանկության վերհանումը, օգնել արդիական նշանակություն ունեցող այնպիսի հարցեր լուսաբանելիս, որպիսիք են Անդրկովկասում ազգայնական կուսակցությունների կողմից իշխանությունը զավթելու պատճառները, նրանց վարած հակաժողովրդական քաղաքականությունը, հեղափոխության «արտահանման» բուրժուական տեսությունը, 1921 թ. փետրվարյան խռովության պատճառները և այլն:

Գ. Գալոյանի աշխատություններին ի մոտո ծանոթանալիս դժվար չէ նկատել պատմաբանի գիտական վերընթացին համահունչ նրա հակումը դեպի ընդհանրացնող, լայնակտավ թեմատի-

կան, որի մշակումը պահանջում է, չէ թե միայն պատմական իրադարձությունների խոր իմացություն, ասել է թե՝ փաստական հարուստ գիտելիքներ, այլ նաև (և ամենից առաջ) տեսական ընդհանրացումներ կատարելու լուրջ ունակություններ: Գ. Գալոյանի վերջին մեկ ու կես տասնամյակի աշխատությունները ցույց են տալիս, որ հանձինս դրանց հեղինակի մենք գործ ունենք տեսաբան-պատմաբանի եզակի դեմքերից մեկի հետ: 1969 թ. հա սովետական պատմագիտությունը հարստացրեց ինքնատիպ մի աշխատությամբ. խոսքը «Բանվորական շարժումը և ազգային հարցը Անդրկովկասում 1900—1922» մենագրության մասին է: Վերնագիրն իսկ արդեն հուշում է, թե որքան ծանր ու պատասխանատու խնդիրներ են դրված եղել հեղինակի առաջ երկու կարևոր պրոբլեմներ արծարծող և ռուսական երեք հեղափոխությունների ժամանակահատվածները ներառնող այդ մենագրությունը շարադրելիս: Արխիվային փաստական նյութերի բազմակողմանի օգտագործումը և տեսական խոր գիտելիքները թույլ են տվել հեղինակին գիտական ու մասնայական ընթերցողի սեղանին դնելու ծավալուն մի մենագրություն, որտեղ հա ստանում է իրեն հետաքրքրող զանազանաբնույթ շատ հարցերի հիմնավոր պատասխանը. դրանց թվում են՝ Անդրկովկասում ազգային-ազատագրական շարժման բնույթը, և բանվորական շարժման վերելքը, հեղափոխական շարժումը և ազգային հարցը, Հոկտեմբերյան հեղափոխությունը և ազգային հարցի լուծումը երկրամասում, ազգային հարցը Անդրկովկասի բուրժուական հանրապետություններում, ՌՍՖՍՀ ժողկոմխորհի և ՌԿ(բ)Կ ԿԿ-ի ազգային քաղաքականությունը Անդրկովկասում սովետական իշխանության հաստատման ժամանակաշրջանում, Անդրֆեդերացիան՝ լենինյան ազգային քաղաքականության պրակտիկ մարմնացում և այլն:

1976 թ. Մոսկվայի «Միսլ» հրատարակչությունը լույս ընծայեց Գ. Գալոյանի «Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները» աշխատությունը, որը 1978 թ. լույս տեսավ նաև հայերեն: Հեղինակը այն ենթավերնագրել է «Ուրվագծեր հրանց փոխհարաբերությունների քաղաքական պատմության. հին ժամանակներից մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը»: Իրականում, Գ. Գալոյանի այս գիրքը արխիվային փաստաթղթերի, մամուլի և գրականության ընտրված նյութերի հիման վրա գրված քննական մի գործ է, որտեղ լուսաբանություն է գտել Ռուսաստանի հետ անդրկովկասյան ժողովուրդների ունեցած ամբողջական պատմությունը: Այդ լուսաբանությունը հարուստ է, որովհետև հարուստ է նաև հեղինակի մոտեցումը. նու ռուս ժողովրդի՝ անդրկովկասյան ժողովուրդների հետ ունեցած տնտեսական, քաղաքական, և մշակութային առնչությունները դիտարկել է մեկ շղթայի մեջ, ցույց տալով, որ անդրկովկասյան երեք ժողովուրդների պատմական այդ կապերը Ռուսաստանի հետ, իրենց առանձնահատկություններով, հանդերձ, ընթացել են պատմական զարգացման միևնույն հունով, միմյանց հետ սերտորեն աղերսված: Այս մոտեցումն է, որ Գ. Դալոյանի աշխատությանը հաղորդում է ինքնատիպ բնույթ և շահեկանորեն տարբերում նույն թեմային նվիրված մյուս աշխատություններից:

Վերջին շրջանի սովետահայ պատմագիտական մտքի ամենաուշագրավ նվաճումներից մեկը Գ. Գալոյանի «Պատմության քառուղիներում» (1982) մենագրությունն է. դա պատմագիտական լայն մի էքսկուրս է մեր ժողովրդի «Մենդից» մինչև այսօր, և հեղինակը այդ բանիմաց էքսկուրսը կատարել է այն ուներեր գիտակցությամբ, որպեսզի պատմական դասերի օգնությամբ նպաստի հարազատ ժողովրդի ինքնաճանաչման և հարատևման գործին: Հայ ժողովրդի պատմություն արմատական հարցերի մասին սինթեզված մի խոսք է հեղինակի սույն մենագրությունը՝ գրված պատմաբանի կրքոտ և հոգատար գրչով ու նաև՝ ժամանակակիցներին խորհելու խրանող և պատմական մեր ծանր անցյալից դասեր քաղելու դրդող որոշակի միտվածությամբ: Այս հանգամանքն է, որ հեղինակի սույն աշխատանքը դարձրել է հույժ արժեքավոր. իր ժամանակակիցների սրտին ու հոգուն հարազատ, ուրեմն և՝ մնայուն մի գործ:

Մեծ ու փոքր ծավալի գիտական շատ ու շատ այլ գործերի հեղինակ է մեր հարեւանը: Եվ դրանց հեղինակին հատուկ են մտքի խորությունն ու փաստերի մեկնաբանման քննական մոտեցումը, կուռակցական և դասակարգային դիրքորոշումը, իր ժողովրդին ծառայելու անհողդողդ նպատակը:

Հայնածավալ է Գ. Գալոյանի գիտական-կազմակերպչական գործունեությունը: Բեղմնավոր այդ աշխատանքում, սակայն, դատորոշվում է մեկը՝ հայ ժողովրդի ամբողջական պատմության 8-հատորյակի ստեղծումը: Նրա անմիջական ղեկավարության ներքո էր, որ գլուխ բերվեց մեր մշակույթի պատմության մեջ այսուհետև իր մշտատև տեղն ապահոված այդ կարևոր գործը, որն արժանացավ հանրապետության պետական մրցանակին:

ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ Դ. Գալոյանը ունի հասարակական ու գիտակազմակերպական աշխատանքի հարուստ կենսագրություն. սա այդ կենսագրության կարևոր դրվագները՝ Երևանի Ֆիզմալսուրանի կոմերիտական կոմիտեի քարտուղար, ՀԼԿԵՄ Երևանի Կիրովյան շրջկոմի քարտուղար, ՀԼԿԵՄ ԿԿ-ի քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար, իսկ 1986 թվականից՝ ՀՍՍՀ ԳԱ փոխ-պրեզիդենտ: 1964—1969 թթ. Դ. Գալոյանը ՍՍՀՄ մինիստրների խորհրդին առընթեր գիտության և տեխնիկայի բնագավառում Լենինյան մրցանակների կոմիտեի անդամ էր, իսկ 1979 թ. ՀՍՍՀ մինիստրների խորհրդի որոշմամբ նա նշանակվում է հանրապետությունում գիտության և տեխնիկայի բնագավառում պետական մրցանակների պետական կոմիտեի նախագահի տեղակալ: Նա արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերության վարչության անդամ է, Սովետա-ավստրիական բարեկամության ընկերության հայկական բաժանմունքի նախագահը, խաղաղության պաշտպանության Հայկական հանրապետական կոմիտեի նախագահը. Հայաստանի կոմկուսի XXIII, XXIV, XXV, XXVI և XXVII համագումարներում Գ. Գալոյանը ընտրվել է Հայկոմկուսի ԿԿ-ի անդամության թեկնածու, իսկ XXVIII համագումարում՝ ԿԿ-ի անդամ: Նա Երևանի քաղաքային սովետի դեպուտատ է:

Կազմակերպությունն ու կառավարությունը բարձր են գնահատել Գ. Գալոյանի ծառայությունները՝ նրան պարգևատրելով շքանշաններով և մեդալներով, շնորհելով ՀՍՍՀ պետական մրցանակի պատվավոր կոչումը:

Ավելի քան երեք տասնամյակ է ընդգրկում Գ. Գալոյանի գիտական, գիտամանկավարժական և հասարակական գործունեությունը: Այդ գործունեությունը այն իրողության ապավառչան է, թե մեր օրերս իրականությունը ինչպիսի մեծ հնարավորություններ է ստեղծում մարդու ընդունակությունների և աշխատասիրության ծաղկման համար: Գ. Գալոյանը այդ իրականության գործնական զավակն է ու նաև՝ նրա հավատարիմ ու անձնվեր զինվորը: Գ. Գալոյանի գործունեությունը մասնավորապես նշել է արգասաբեր, որովհետև նա չանհ չի խնայել իր տաղանդն ու հնարավորությունները սովետական պատմագիտությանը, հարազատ ժողովրդին ծառայեցնելու գործում: Հանրապետության գիտական հասարակայնությունը, իրավամբ, մեծ սպասումներ ունի անվանի պատմաբանից: Վստահ ենք, որ իր ուժերի ծաղկման այս շրջանում նա մեր պատմական գիտությունը կհարստացնի իր մտքին ու տաղանդին արժանի նոր գործերով: Ցանկանք մեր հոբելյարին հաջողություն, երկար ու երկար տարիների բեղմնավոր կյանք և իր ծրագրումների լիակատար իրագործում:

ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մեծարգո հոբելյար.

Հայաստանի գիտական և ընթերցող լայն հասարակայնության հետ միասին «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի խմբագրական կոլեգիան սրտանց շնորհավորում է Ձեզ՝ անվանի գիտնականիդ, ազնիվ հայրենասեր քաղաքացուդ, մեր խմբագրության կոլեգիայի շնորհաշատ անդամիդ՝ Ձեր ծննդյան 60 ամյակի առթիվ: Մաղթում ենք Ձեզ քաջառողջություն և երկար տարիների կյանք՝ հոգուս մեր բազմադարյան մշակույթի ու պատմության հետագա արդյունաբեր ուսումնասիրության:

«ԼՐԱԲԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»
ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ